Գործ թիվ ԵԴ2/31098/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23.11.2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ.Մազմանյանս, ծանոթանալով «Մանվելյան Շին» ՍՊ ընկերության ընդդեմ պատասխանող ՀՀ դատական դեպարտամենտի՝ թիվ «ԴԴ-ԳՀՄՇՁԲ-23/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 12.09.2023թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումին,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Մանվելյան Շին» ՍՊ ընկերությունը 27.09.2023թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանող ՀՀ դատական դեպարտամենտի՝ թիվ «ԴԴ-ԳՀՄՇՁԲ-23/06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 12.09.2023թ. թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Հ.Ջալալյանին՝ 27.09.2023թ.:

Դատարանի /դատավոր Հ.Ջալալյան/՝ 02.10.2023թ. որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է:

«Մանվելյան Շին» ՍՊ ընկերությունը 19.10.2023թ. հայցադիմումը ներկայացրել է կրկին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Վարդանյանին՝ 19.10.2023թ.:

Դատարանի /դատավոր Գ.Վարդանյան/՝ 24.10.2023թ. որոշմամբ հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, վերադարձվել է:

«Մանվելյան Շին» ՍՊ ընկերությունը, հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելուց հետո, 16.11.2023թ. հայցադիմումը ներկայացրել է կրկին:

Հայցադիմումը մակագրվել է դատավոր Գ.Մազմանյանին՝ 16.11.2023թ.:

Հայցադիմումը հանձնվել է դատավոր Գ.Մազմանյանի աշխատակազմին՝ 20.11.2023թ.:

Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը, գտնում եմ, որ հայցվորի կողմից հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

Գործի արդյունավետ քննությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է գործը նախապատրաստել դատաքննության:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-200-րդ, 234.6-րդ, 234.9-րդ հոդվածներով՝ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ **Գ. ՄԱԶՄԱՆՅԱՆ**